

Alberto Douredjian y Daniel Karamanoukian. La inmigración armenia en el Uruguay, Montevideo, 1993, 350pp.

Ուրուկվայը հայկական ցեղասպանությունը ճանշող առաջին պետությունը եղավ 1965 թ. Այս կետը, գումարվելով մերթ ընդ մերթ երկրի տարրեր ատյաններն հայ ժողովուրդին ի նպաստ լավող ձայններուն, թերևս պատճառ եղավ, որ տեղիւն փոքր, հարաբերաբար լուսանցքային կյանք ապրող գաղութը Հայաստանի ու Սփյուռքի ուշադրության արժանանար:

Սակայն, մինչև վերջերս անոր նվիրված մանրամասն պատմություն մը գոյություն չուներ: Բացառելով Աշոտ Արծրունիի «Հարավ. Ամերիկահայաց տարեցույցի» (Պուենոս Այրես, 1943) տված պատմական ակնարկը, հայերեն լեզվով այլ աղբյուր չկա: Սպանախոս ընթերցողն ալ ավելի մխիթարական վիճակի մեջ չէր, քանի որ միայն Նարսիսո Պինայանի «Հայ գաղութը Արժանթինի մեջ» հատորը (Պուենոս Այրես, 1974) որոշ տեղեկություններ կը փոխանցեր, որպես կցորդ բուն նյութին՝ արժանաթիւն հայ գաղութի: Հոս ու հոն ցրված տվյալներ ու պատմական ուրվագծեր (հաճախ՝ սխալաշատ) բոլորովին անբավարար էին:

Այս բացը դոցելու աշխատանքը ստանձնած են երիտասարդ հետազոտողներ Ալբերտո Տյուրեմյան և Դանիել Գարամանուկյան, որոնք 1993-ին հրապարակ հանեցին իրենց ճիգին արդյունքը՝ «Հայկական գաղթականությունը Ուրուկվայի մեջ» դիրքին առաջին հատորը:

Ա. Տյուրեմյան (1949) շրջանավարտ է Մոնթեվիդեոյի պետական համալսարանի պատմագիտական ճյուղին: Սպաներենի թարգմանած ու շորս պրակներով հրատարակած է Հրանտ Փաստրմաճյանի ֆրանսերեն «Հայոց պատմություն» հատորին առաջին ութը գլուխները (1987—1989). մնացյալը դեռ անտիպ է: Դանիել Գարամանուկյան (1962) մարդագիտութեան (Մոնթեվիդեո) և հայոց լեզվի ու պատմության (Երևան) համալսարանական դասընթացներու հետեւած է, իսկ 1985-ին հրատարակած է «Հայկական ցեղասպանությունը Ուրուկվայի մամուլին մեջ. 1915 թվական» սպաներեն լեզվով ժողովածուն:

Ներկա հատորը բաղկացած է տասնմեկ գլուխներէ: Ըստ գիրքին վերջը տրված ազդին, անոր պետք է հետևի երկրորդ հատոր մը՝ ութը

գլուխներով: Այս բաժանումը զուտ ֆինանսական պատճառներով կատարված է, թեև կարելի է ավելցնել, որ, կամա թե ակամա, մեթոդական բաժանում մը կա նաև. այս հատորը արտաքին տեսանկյունէ կը քննարկէ նյութը, իսկ հաջորդը ներքին դիտանկյունէ մը պիտի անդրադառնա գաղութին:

Վեց տարիներու տքնաջան աշխատանքէ ետք, այս գործը լույս աշխարհ եկած է և հավանական է, որ կեն ճանապարհին շմա: Անկէ գլուխներ արդէն ղեկուցումի կերպով ներկայացված էին Հարավային Ամերիկայի գաղութներու ուսումնասիրության նվիրված Բ գիտաժողովին, կայացած Գորտոպա (Արժանթին), 1991 սեպտեմբերին:

Գիրքի բուն շարադրանքն էտք, կու գա հավելված մը (էջ 167—338)՝ մատենագիտություն և ցանկեր: Հավելվածը, որուն կ'անդրադառնանք ավելի անգին, կը ներկայացնէ 1888—1960 թթ. մինչև Մոնթեվիդեոյի նավահանգիստն Ուրուկվայ ժամանած ավելի քան վեց հազար հայերու ամբողջական ցանկը՝ բաղված սլաշտոնական արձանագրություններէ:

Հեղինակները նախաբանին մեջ կը բացատրեն փաստահավաքական իրենց աշխատանքին տարբեր ուղղությունները. Եղեռնի վերապրողներու և գաղթականներու առաջին սերունդին հետ հարցալրույցներ, սակավաթիվ տպագիր աղբյուրներու զննում, ուրուկվայան և հայկական մամուլի, մասնակի հետազոտություն, մատչելի արխիւներու պրպտում, առևտրական տարեգիրքերու, հեռախոսադիրքերու և դանազան վավերաթուղթերու քննություն, ևն: Այս

1 Տե՛ս մեր մանրամասն թղթակցութիւնը՝ «Արժանթինէն՝ համասփյուռքյան մտածողության մը», «Հառաջ», 21 նոյեմբեր 1991: Ուրուկվահայ համալսարաններուն նվիրված գլուխը, որ Բ հատորին մաս պիտի կադմէ, լույս տեսած է Ա գիտաժողովին (Պուենոս Այրես, նոյեմբեր 1989) նյութերը ամփոփող հատորին մեջ (Los armenios en América del sur, Instituto de Investigación Armenológica, Buenos Aires, 1992, 81—83).

բոլորը՝ վիճակագրական տախտակներու, ճոխ նկարագրողումի (մեծ մասով՝ անտիպ լուսանկարներ և փաստաթուղթեր) և լուսաբանական նշմարներու օգտագործումով, դարձած է դյուրին ընթերցվող և միաժամանակ՝ գիտականորեն կապմված շարագրանք մը:

Գործին տարողությունը պատկերացնելու համար պետք է նկատի ունենալ, որ ուրուկվահայ տպագիր մամուլը գրեթե արհամարհելի կշիռ մը ունեցած է 1937-ն ի վեր, այնքան, որ մինչև վերջերս անհայտ էր մատենադետնություն (ցանկագրումի առաջին փորձը կատարված է 1939-ին²)։ Մինչև այսօր Ուրուկվայի հայ գաղութին կյանքը պատկերացնողը, գրական թև ժխտական դրսևորումներով, ձայնասփյուռը եղած է ու կը մնա: Ինչպես ըսինք, տպագիր ուսումնասիրություններ գրեթե չկան, իսկ արժանթիւնահայ մամուլը համեմատաբար քիչ բան կը սպրոնակէ: Նույնը պետք է ըսել սփյուռքահայ մամուլի պարագային, որ երբեմն, հատկապես 1920-ական թթ., հրատարակած է այդ հեռավոր ափերէն եկած թղթակցություններ: Սնաց որ, անհասկնալի պատճառներով, ուրուկվահայ որոշ կազմակերպություններ իրենց արխիւները չեն հոժարած բանալ, ինչ որ ուսումնասիրության հավելյալ խաչընդոտ մը եղած է:

Հետեւաբար, երկու հեղինակները իսկական դաշտային աշխատանք տարած են, գրեթե ազգագրական դրանցումի մակարդակով, պատկեր մը կարելիին չափ վերակազմելու համար: Այս ուղղությամբ, բանավոր պատմության անգնահատելի հարստություն մը ամբարած են: Ալեհ-հեր ծերունիներու պատմածները, լուսանկարներ, թուղթեր, ամեն ինչ կրնար փշուր մը ևս ավելցնել կառույցին. այս գիրքին մեջ ի մի բերված տեղեկությունները անկրկնելի են, որովհետև անոնց աղբյուրներէն ոմանք այլևս գոյություն չունին:

Առաջին երկու գլուխները հայոց պատմության համառոտ ուրվագիծ մը կը ներկայացնեն, մինչև Մեծ եղեռնը: Երկրորդ գլուխին մեջ, ինքնապաշտպանական կոիվներու մասին խոսկու ատեն, հեղինակները մեջբերած են ուրուկվահայ վերապրողներու վկայություններ:

Եղեռնին ընթացքը (երրորդ գլուխ) ներկայացված է բաղմամբով վերապրողներէ առնված քաղվածքներով: Երկու էջ միայն, որոնք ավելի հստակ ու մեկին են քան հաստատիոր հատորներ և սերտորեն կապված են չորրորդ գլուխին:

² Տե՛ս Կարապետ Հասասյանի հոդվածը (idem. 102—112):

խին հետ, ուր կը խոսվի Ուրուկվայի մէջ Եղեռնի արձագանքի մասին. մամուլի հաղորդումներէն զատ, տեղւոյն փոքրաթիւ հայերն ալ աշխատած են որոշ նպաստ մը բերել տարագրյալներուն և նույնիսկ ոմանք միացած են կամավորական շարժումին:

Հինգերորդ գլուխը, նույնպես կարճ, 1917—1921-ի բախտորոշ դեպքերուն կ'անդրադառնա: Ըստ որոշ աղբյուրներու, հունվար 1920-ին Հայաստանի Հանրապետության փաստական ճանաչումէն ետք, Ուրուկվայը եղած է զայն իրավականորեն ճանչցող 36 պետություններէն մեկը, թեև հեղինակները դիտել կուտան, որ այդ արարքը հաստատող փաստաթուղթերը չեն հայտնաբերված: Նույն տարվան դեկտեմբերի 16-ին, Ալգերու Ընկերության Ուրուկվայի ներկայացուցիչը եղած է յոթը թեր քվարկողներէն մեկը, որպէսզի անկախ Հայաստանը (թեև արդեն խորհրդայնացած) Ընկերության անդամ դառնար:

Դարասկզբին, Հայաստանի Ամերիկայի երկիրները ձեռնարկած են ներդադր քաջաբեւելու գործունեության: Տնտեսական բարգաւաճումին նպաստող աշխատութի պակասը կար. հետեւաբար, յիշխանագիտական ներկայացուցիչները լիազորված էին այս ուղղությամբ անհրաժեշտ քարոզչությունը տանելու Եվրոպայի և Միջին Արեւելքի մէջ: Ուրուկվայի պարագան ալ տարբեր չէր: Աղետն ազատած և միջին արեւելյան որբանոցներուն մէջ ապաստանած հայ տարագրյալները կ'աշխատէին տարբեր ուղղություններ գտնել իրենց կյանքը վերակերտելու համար: Վեցերորդ գլուխը բաղմամբով վկայություններ կը բերէ Սուրիո և Լիբանանի մէջ իրենց ապրած կյանքին ու ճամբորդության որոշումին մասին: Վերապրողի մը վկայությունը շատ դիպուկ է հասկնալու համար թե՛ պետական քարոզչության բովանդակությունը և թե՛ գաղթականներու ականալությունները. «Երբ Երուսաղեմ էի, կը հիշեմ, որ հորեղբայրս ինձի ցուցուց թերթի մը մեկ ծանուցումը, ուր կ'ըսվէր թե Ամերիկայի մէջ երկիր մը կար՝ Ուրուկվայը, որ գաղթականներ կ'ընդունէր, ուր ցեղային հարցեր և կրօնական հալածանքներ չկային, և շատ գեղեցիկ կլիմա ունէր» (էջ 63):

Յոթներորդ գլուխին մէջ հավաքված են Հատինական Ամերիկայի մէջ հայերու ներկայության վերաբերյալ տարբեր տեղեկություններ, որոնք ներածություն մըն են Ուրուկվայի մէջ հայերու ներկայության խնդրին: Ըստ հիսուսյան կրօնավորի մը վկայության, 1729-ին Գատիդէն դեպի Տե լա Փլաթա գետը նավարկած և Մոնթեվիտեո խարսխած նավու մը տըն-

տևեր հայ էր, թևերն առաջինը, որ ոտք դրած ըլլա այս շրջանը: Իսկ երկրորդ պարագան, «վանեցի վարժապետ» կոչված, նույնպես անանուն հայ մըն է, որ 1862-ին Պրադիլ հաստատված է Մոնթեվիտեոյի ճամբով:

Սակայն, ինչպես կը պարզվի ութերորդ դարիսկն, հավանական է, որ այս վերջին թվականն առաջ հայեր արդեն հաստատված ըլլային Մոնթեվիտեո: Դիվանական թուղթերէ հայտնի կը դառնա, որ 1835-ին Պուենոս Այրեսէն հոն ժամանած է Խուան Ակուստին Աբսարյան անունով, Ֆրանսա ծնած 34-ամյա ոստիկան մը, որ Գորոտոն թաղամասը կ'ապրեր: Իսկ 1850-ին Մարիա Պելինճյան անունով մեկը երեք կալվածներու տեր էր քաղաքին մեջ (էջ 79):

Արտասահմանէն եկող ճամբորդներու ցուցակները կը սկսին 1888-ին, բայց 1889—1895 թթ. մատյանները անհետացած են: Այդ տարին ժամանած են երեք հայեր, մինչև 1900՝ տասնհինգ եւս: Բայց միայն ասոնցմէ մեկը՝ վասպուրականցի Մանուկ Աղարյան, ստուգապէս հաստատված ու ընտանիք կազմած է Ուրուկվայի մեջ, ուր և մահացած է: Հասած ըլլալով 1890-ին, իր անունը պարփակող մատյանը չկա: Իր կենսապատումը վերականգնված է իր աղջկան շնորհիվ, որ Ուրուկվայի հայադղի առաջին վկայալ ուսուցչուհին եղած է (Աղարյանի տղան՝ հայադղի առաջին ղեկավարականը):

Ըստ հիշխաններու կատարած հաշվարկներուն, 1888—1960 թթ. ծովային ճամբով Ուրուկվայ մտած է 6112 հայերուն 78.05 առ հարյուրը հոն հասած է 1923—1931-ին՝ Կիլիկիոյ պարպումին և Լոդանի դաշնագրին հաջորդող տարիներուն: Կ'արժե նկատի ունենալ, որ այդ ութամյակին մոտ 180.000 ներգաղթողներ ժամանած են Ուրուկվայ: Ուստի, այդ զանգվածին 2 առ հարյուրէն քիչ մը ավելին հայերն էին: Հիշխանները գիտակից են, թէ այս հաշիւները ամբողջովին ճշգրիտ չեն. անոնք կը նշեն, թէ հայտնի չէ քանի՞ հոգի Ուրուկվայ մտած է Արժանթինի կամ Պրադիլի ճամբով, ինչպես և Ուրուկվայ ժամանած, բայց այնուհետեւ Արժանթին տեղափոխված հայերու թիվը: Սակայն, կարելի է մոտավոր պատկեր մը կազ-

մել, ինչ որ վերաբերում է իրենց ուշադրութենէն, բաղդատելով այս թիվերը 1931-ին կատարված գաղութային մարդահամարին հետ, որ շուրջ 4.000 հոգիի արդյունք մը տված է (տե՛ս էջ 125—127), եթէ նկատի ունենանք, որ հիշյալ ութ տարվան միջոցին 4.771 հոգի ժամանած է (չհաշված ավելի հիները, մոտ երկու հարյուր, ինչպես և հոն ծնածները), մտածելի է, որ մոտավորապէս 20 առ հարյուրը մեկնած է երկրէն:

Տյուրեճյան և Գարամանուկյան մանրամասն վերլուծումի ենթարկած են այս ցուցակները՝ վիճակագրական բաղմամբիլ տվյալներ պարզելով: Ի մասնավորի, շահեկան է նշել, որ նորեկ այրերու գրեթէ 38 առ հարյուրը բանվոր էր, իսկ 20 առ հարյուրը՝ հողագործ (էջ 95): Սակայն, ինչպես Արժանթինի պարագային, Ուրուկվայի հայերու 95 առ հարյուրը քաղաքաբնակ դարձաւ ու հաստատվեցաւ մայրաքաղաքը: Այս երևույթը կը բացատրվի, ըստ հիշխաններուն, Ուրուկվայի հողատիրական կեդրոնացումով (մեծ կալվածատերերու դերակշռութիւն) և եկվորներու դրամադուխտի պակասով, քանի որ պետութիւնը չէր քաջալերեր հողագործութիւնը. «Դաշտ չգացինք որովհետեւ մեղի ուղղութիւնը շարունակելու համար մշակներ էինք, հողագործներ: Եթէ կառավարութիւնը հող և գործիք տված ըլլար մեղի...», կ'ըսէ հին սերունդէն ներկայացուցիչ մը (էջ 114):

Իններորդ դարիսկն մեջ հավաքական «կյանքի պատմութիւն» մը ընթերցողի աչքին առջև կը պարզվի, շնորհիվ հարուստ վկայութիւններուն, դորս հիշխանները ճարտարորէն միաճյուսած են վիճակագրութեան, տվյալին, լրրատվութեան հետ: Արժանագրված են, անշուշտ, անհանդուրժողութեան, հալածանքի պարագաներ, թէ և սակավաթիւ. նոր երկիրը դրախտ չէր, իհարկէ, և հիշխանները խուսափած են հովվերգական պատկերացումներէ: Բանվորի կամ շրջուն վաճառականի սկզբնական, ծանր տարիներէն ետք, հայերը կը սկսին դանդաղ վերելք մը: Տասներորդ դարիսկը կը նկարագրեն տնտեսական ամրապնդումի տարիները՝ 1940—1950, 1946-ին, Մոնթեվիտեոյի 770.000 հոգինոց բնակչութիւնը մոտավորապէս 7.650 հայեր կը հաշվէր, մեկ առ հար-

յուրի համեմատությունը կայուն է մինչև այսօր: Քաղաքի նպարավաճառներուն մեկ յոթերորդը հայեր էին, ինչպես և կոշիկ շինողներուն գրեթե 38 առ հարյուրը: Այս տասնամյակին ընկերային տեղաշարժի և համարկումի (integration) հոլովույթ մը արդեն դիտելի է, հայերը կը սկսին մերվիլ դիրենք ընդունող ընկերության, ուր շաղախումի առիթները բաղմաթիվ են, և առաջին շրջանի աղքատ թաղերը կը լքվին, ավելի բարեկեցիկ շրջաններու ի խնդիր:

Տասնմեկերորդ դուիսը՝ համառոտ, ընդհանուր գիծերով գաղութին այդ տարիներու ընկերային կյանքը (դաշտագնացություններ, թատերական ներկայացումներ, համերգներ և այլն) կը վերակազմեն:

Ինչպես ըսինք, գիրքին հավելվածական դուիսը Ուրուկվայ ժամանած հայերու ամբողջական ցուցակը կը բերեն, ուր նշված են ժամանումի թվական, անուն, սեռ, տարիք, ընտանեկան վիճակ և ճամբորդած նավը: Կը խորհինք, որ ցուցակին հրատարակումը գործնական նպատակ մը ունի. բնավ զարմանալի պիտի չըլլա, եթե քանի մը տարիներ մայր տոմարները անհետանան կամ փոշիանան, ինչպես որ ընդունված կարգն է հարավային կողմն աշխարհի, շնորհիվ պաշտոնական անտարբերության ու անփութության: Կա նաև երկրորդ, ավելի «առևտրական» նպատակ մը. վստահաբար շատեր պիտի ուզեին ունենալ այն գիրքը, ուր իրենց ծնողքին կամ իրենց իսկ անունը հիշված է, տեսակ մը ճեղք աշխարհի տոհմա-

բանություն» լիովին տեղայնացած ոմանց համար: Պետք չէ մոռնալ ամենեն կարևորը. աքիկա մարդկային խմբավորումի մը պատմությունն է, բայց նաև՝ անհատներու, որոնց անունը վերադարձնելու փորձ մըն է այս աշխատանքը:

Տյուրեմյան և Գաբամանուկյան նախանյութի ծավալուն առաջը մը հիշված են ժամանակի ու մոռացումի փոշիներեն. հնադեպի համբերությամբ հավաքած են ամեն բեկոր, որ իրենց գործին օգտակար կրնար ըլլալ: Բայց արդյունքը թանգարանային աշխատանք մը չէ: Քոլի բովի բերված բոլոր կտորները մոտավոր անցյալի բարախուն պատկերի մը վերածված են, ուր ընթերցողը մասնակից կը դառնա մարդկային համայնքի մը դժվարին ծնունդին ու զարգացումին:

Դժվարին է նաև իրենց սպասող աշխատանքը. գաղութի մը ներաշխարհը, գաղութ, որ Սփյուռքի ամենեն խնդրահարույց և բախումնալից դոտիններեն մեկը կը մնա մինչև այսօր: Հուսանք, որ Բ հատորը շուտով լույս աշխարհ գա. հոն հավանաբար վերլուծումը գերակշիռ դիրք պիտի գրավեն պատմողական ընթացքին նկատմամբ: Այդ վերլուծումը կրնա օգնել հասկնալու Ուրուկվայի հայերու ներկա տաղանապալի վիճակն ու ապագայի հուսանկարները:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԵՈՍՅԱՆ
(Արգենտինա, Բուենոս Այրես)